

ՏԱՍՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ

ՄԱՅԿ

Տարեկան արժու 10 րուր, կէս տարեկան 6 րուր:

Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանապատում մէջ:

Ոտարարագրապիւր դիմում են ուղղակի:

Тифлис. Редакция «Маяк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է: ամիս 1 ռուբլով:

Յայտարարութիւնների համար վճարում են:

Խմբագրատունը բաց է 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները:—Ներքին Տեսչութիւնը, Նախկին Մեծ-Վարաքիտայից: Նախկին խմբագրի: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիայ: Կերմանիս: Կամբուտայ: ճառը: Նախկին Թիֆլիսից:—Հեռագրի:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՍՈՒԹԻՒՆ

Երբ Եւրոպայում ստացվեցաւ լուրը թէ Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Գարֆիլդի վրա ատրճառակ արձակվեցաւ, շատերը մտածեցին որ Գիտօ մարդասպանը անպատճառ սօցիալիստ պէտք է լինի: Աւրեմ, ասում էին ամենքը, սօցիալիստները կամենում են համաշխարհային անհիշանութիւն նրանց համար մի և նոյն է թագաւոր լինի թէ հանրապետութեան նախագահ, բաւական է որ մարդ իշխանութիւն ունի ձեռքում:—Եւ նրանք վճռել են ամենքին սպանել, ով որ իշխանութեան ներկայացուցիչ է:

Մի քանի ժամանակից յետոյ լուր ստացվեցաւ թէ Գիտօ խելագար է: Բայց այդ լուրն էլ շուտով հերքվեցաւ: Եւ ահա ըսկայեցան զանազան ենթադրութիւններ այն շարժառիթների մասին, որոնք գրգռեցին մարդասպանին ձեռք բարձրացնել Ամերիկայի հանրապետութեան նախագահի վրա: Ամերիկայի հանրապետութեան փոխնախագահ պ. Արչեր իրանդացի է և եթէ Գարֆիլդ սպանված լինէր, փոխնախագահը պէտք է բռնէր նրա տեղը և կառավարէր երկիրը մնացած երեք տարի շարունակ: Նախագահը ընտրվում է չորս տարով և եթէ այդ ժամանակամիջոցում մեռնի, նրա տեղը պահանջում է ընտրութեան մինչև ընտրողական ժամանակամիջոցի լրանալը փոխնախագահն է բռնում:

Եւ ահա սկսվեցան նոր ենթադրութիւններ. երեւի ոտում էին, Գիտօ իրանդական կուսակցութեան գործիչ է և յանձն առաւ նախագահի սպանութիւնը: Արչերին նրա տեղը նստացնելու համար, որպէս զի Ամերիկան, այն ժամանակամիջոցում, երբ Անգլիայում վճռվում է իրանդական խնդիրը, իրանդացիներին համակեր է ոչ թէ Անգլիային, գուցէ ձնշում ներգործելով Մեծ-Բրիտանիայի կառավարութեան վրա իրանդական հարցի յօգուտ իրանդացիների վրձնելու մէջ:

Բայց շուտով յայտնվեցաւ որ այդ ենթադրութիւնները, որքան էլ հաւանական և բնական, հիմնովին սխալ էին: Յայտնվեցաւ որ երեւնազորքը պաշտօնական, բիւրօ-կրատիայի կուսակցութեան է պատկանում և իր յանցանքը գործեց զորված լինելով բոլորովին իր անձնական և իր գասակարգի շահերից:

Յայտնի է որ ամերիկական հանրապետութեան կառավարութիւնը հիմնվում է ընտրողական սկզբունքի վրա, բայց ժողովրդից ընտրված կատարողական իշխանութիւնը իր կողմից իրաւունք ունի նշանակել արմինստարացիայի, վարչութեան պաշտօնականներին: Ահա այդ պաշտօնները ձեռք բերելու մէջ կատարվում են ամեն տեսակ

զեղծումներ և նոյն իսկ պաշտօնականներ զատակարգի մէջ զեղծումները, անիրաւութիւնները և կաշառակրութիւնը անպակաս են: Ամեն տեսակ բաղդախնդիրներ, որոնք չաջողվեցան ոչ մի ուրիշ գործի, պարագմունքի, արհեստի մէջ, ձգտում են այլ և այլ պաշտօնական տեղերին, զանազան ներքին և աննրքի միջոցներով որսում են ազատ տեղերը, ինտրիգաներ են անում և զած պաշտօնականներին իրանց տեղերից զրկելու և նրանց տեղը բռնելու:

Գարֆիլդ նախագահը, իր ընտրութեան օրից, յայտնվեցաւ բացարձակ թշնամի բաղդախնդիր, կաշառակր պաշտօնականների, շատ դժուարութեամբ և մեծ ընտրութեամբ էր բաժանում վարչական այլ և այլ պաշտօնները: Գիտօ եղեւնազորքը այդ տեսակ բաղդախնդիրներից մէկն է: Նա մի ժամանակ եւրօպական քաղաքներից միում ամերիկական հիւպատոսի պաշտօնակատար էր, յետոյ զրկվեցաւ այդ պաշտօնից: Գարֆիլդ գիտօ նախագահ չընտրված, նա աշխատում էր պարտաւորեցնել նրան, որ անպատճառ նշանակի իրան ամերիկական հիւպատոս ֆրանսիայում, Մարսէյլ քաղաքում: Բայց Գարֆիլդ, նախագահ ընտրվելուց յետոյ, չէր կատարեց նրա խնդիրը, ոչ մի տեղ չէր նշանակեց նրան հիւպատոս, ոչ մի ուրիշ պաշտօն էլ չէր տուեց նրան: Եւ ահա զընտրեց ծագեց ով և միջնորդութիւն: Ապաւսութեան փորձի գործիչ պատճառը, որին կատարելագույն անձնական շահ էր:

Ամերիկայի պետական կազմակերպութեան մէջ կայ զարմեալ մի մեծ սխալ, մի մեծ անլարմարութիւն. պաշտօնները, որոնք կատարողական իշխանութեան նշանակութեամբ են տրվում, դարձեալ թւում շատ մեծ են: Շատերը այն կարծիքն են յայտնում, որ պէտք է աշխատել, որքան հնար է, սահմանափակել այն պաշտօնները, որոնք վարչութեան նշանակութեամբ են ստացվում և որքան հնար է ընդարձակել այն պաշտօնները, որոնք ձեռք են բերվում ընտրողական հիմունքի վրա: Այդպիսով միայն սանձ կը դրվի ինտրիգաներին, կը թուլացվին այն դժգոհութիւնները, որոնք Ամերիկայում իրանց սկիզբ են առնում պաշտօնականների դատակարգի, բիւրօկրատիայի մէջ:

Ինչպէս երևում է դժգոհութիւնը ամեն տեղ նոյն զգուշի միջոցներ է գործ գնում և բիւրօկրատիան, որ ուրիշ երկրներում ազգերի ամենապահպանողական մասն է կազմում միշտ, որովհետեւ ոյժը նրա ձեռքում է, Ամերիկայում, որտեղ նա թող և իրաւունքներից գուրի է, գիտում է նոյն դատապարտելի, հրէշաւոր միջոցների, սպանութեանը, որին ուրիշ երկրներում դիմում են պետութեան զոյգութեան թշնամիները, անարխիստները: Այդպիսով Ամերիկայում պետութեան կազմակերպութեան, նրա կանոնաւոր խաղաղ զարգացման ամեն նախադրութիւնները, անարխիստի սկզբունքի ներկայացուցիչները, — բիւրօկրատիկներն են: Իսկ պահպանողականները այդ երկրում հանրապետականներն են:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵՏ-ՎԱՐԱՔԻՒՍԱՑԻՑ

Յուլիսի 18-ին

«Մշակի» № 109 հրատարակած Մեծ-Վարաքիլիի նամակը, որի մէջ խիստ անտեղի զրպարտութիւններ են բարդվում տեղական զարգացների հոգաբարձուաց և ուսուցչաց վրա, բաւական վատ տպաւորութիւն գործեց թէ վերջիններս և թէ ժողովրդի վրա: Նամակագիրը ձեռնարկով իրան հասարակութեան բարեկամ և ծածկելով թանձր քողի տակ իր սրտում ամբարված կիրքը և սև նախանքը, այնքան խորամանկութեամբ է խուսում, որ նրա բնատրութեանը և հանգամանքին անձանթ մտքը անշուշտ կը հաւատայ և արած թշնամութիւնը բարեկամութիւն կը համարէ, և այսպէս, նա սկսելով երկպառակութեան և անբարեկամութեան սեւ ծագի ժողովրդի, ուսուցչիցների և հոգաբարձուների մէջ ստուգանքով գործող անձանց պարտաւորութիւններ կատարելու մէջ, ժողովում է ինքը, և ինչպէս երևում է շարունակելու է իր զրպարտութիւնները զրկել, դուռ երկար ժամանակ, մինչև կը յաղեցնի իր ոչ մի օրինաւոր փաստի վրա չի հիմնած կիրքը, որով անաշխի քայլն անելով երկպառակութեան և վրէժխնդրութեան մէջ, ինչեւ պատրուակով խանդարելու է շատ բան ի վնաս հասարակական օգտի, որ պատու չէ անում ոչ իրան թղթակցին և ոչ լրագրութեան, որ անբարոյութիւն է ունեցել այդ տեսակ մոլի և բաղդախնդիր թղթակցիներին պատանելու, որոնք թշնամութիւնից գործին նայում են վատ կողմից, խոչընդոտելով թէ Գրքան վնաս է մեր զարգացներին:—Եթէ այդ պատու թղթակցի նամակները, հակառակ նրանց համար գործող անձանց, որոնք նայելով շրջապատող հանգամանքներին բաւական թաւաքաշութեամբ են վարում պարտաւորութիւնները, այդ արդէն պարզ է. անխղճութիւն է խաղաղ շինել հասարակական օգուտները մի բաղդախնդիր մարդու և գերի շինել նրան մի անտեղի հասարակութիւն իր գործիչներով որ կրքից կուրացած խռովութիւն է ցանկում այս և այն լրագրում զանազան անունների տակ ծածկված: Արհամարհանքով նայելով թղթի տակ որ ինչ կուզեն գրեն, դժուար է ստանել և ընթերցող հասարակութիւնը կը դատապարտէ, պատասխանել ամեն մի ցանցաւ զրպարտութեանց, պէտք է բան ու գործ թողած դրանով պարտաւոր: Յետոյ:

Թղթակցից չէ հասկանում թէ ում, երբ և ինչու համար է մտաբերում, նա պէտք է կռւել, թէ մտաբերելով օգուտ է տալիս թէ վնաս, գործել է տալիս թէ վնասեցնում է, — նա այնքան անապիւր է գտնվում, որ թող է տալիս իրան անպատուել հոգաբարձուաց և ուսուցչաց, անխղճ, խաբեքայ, աղքի դաւն քրտնելով վատաբան փողերը լափող, միաբնակներին խաբարտ ճանապարհով խաբող բաւերը չապելի, աւելացնելով «Մի օր զարգացը ստանկացած կը հրատարակվի, այ քեզ սուտ և անհիմն փաստերի վրա հիմնած մարգարէութիւն: Ո՛վ որ փողը ի շատէ ծանօթ է մեր հոգաբարձուների և ուսուցչիցների հետ և վերջիններս ստացած ոտձիկ քանակութեան հետ, կարգելով այդ խօսքերը, գրողին խնդրելով զրկված կը համարէ. նա հազար (իր) իրան զատուր փող օրինակներից, ընտրում է երկու զատուրը, որի գէմ, ձեզ, պ. խմբագիր, ներգութիւն եմ տալիս յայտնելով, թէ մեր զարգացը սկսվելով 1853 թվականում, մինչև 1862 թ. ոչ մի կողմից զրաւագույն չէ ունեցել, որը կառավարելով մի ուսուցչից ստացել է տարեկան 120 լուրերը չափ, որի մի ժապը տուել են աշակերտատեղերը, իսկ միւսը լրացրել են զարգացի բարերար Գ. և Մ. Խան-Աղեանները, իրանց սեփականութիւնից: 1862 թ. հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսի բարեհաճութեամբ յատկացրած է զարգացին իկուղեցական գումարից 2500 ռ. գրամագուլի, որից

ստացած 300 ռ. տարեկան տոկոսով, մինչև 1877 թ. վերատեսչութեամբ Մ. Խան-Աղեանցի, ոչ միայն պահուել է 2 ուսուցչից, այլ և 500 ռ. աւելացնելով գնված է զարգացի համար մի տեղ, ընդարձակ յարմարաւոր սենեակների պատերով, որ արժէ մինչև 3000 ռ. և այդքան ժամանակամիջոցում վերատեսչը հասարակութիւնից ընտրուած հաշուապահաց հետ ամեն տարի հաշիւ է ներկայացրել հոգեւոր իշխանութեանը: 1877 թվականից զարգացի վարչութիւնը յանձնված է ներկայ հոգաբարձութեանը որ նոյնպէս մանրամասն հաշիւ է ներկայացրել ում հարկն է ամեն տարի, և այս վերջինը ոչ երկար ժամանակամիջոցում, թղթակցից ծաղրած և մեղադրված հոգաբարձութիւնը, նուիրատուութեան ձեռքով չինել է բաւականին ընդարձակ զարգացական տուել, բացել է օրիորդական զարգաց, առանձին աղբիւր գտնելով կառավարելու համար, և զարգացական դրամագուլիւ պ. Ա. Թանիրեանցի 4000 ռ. զընտրելով, հասցրել է մինչև այսօր 8650 ռ.: Եւ այս բոլոր հաշիւը այնքան պարզ է, որ ցանկացող և ձեռ թղթակցից կարող է մի քառորդ ժամում ստուգել երբ կամենայ, հոգաբարձութեան մօտ գտնված պատճենական տոււարից:

Հոգաբարձուներին մեղադրել, թէ ինչի չեն հրաժարվում իրենց պաշտօնից, անարգարութիւն է. դա հասարակութեան գործն է, նրանք ուրախութեամբ կը հրաժարվէին եթէ հասարակութիւնը կամենար: Այս մասին մօտ օրերումս ըստուգեց և թեմական տեսուչ պ. Պառլանցը:

Գրողացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 5 օգոստոսի

Տեղւոյս հայ և ռուս լրագրիչներում մեր Թիֆլիսի հիւանդի (СТОЛПЕ) վրա ոչ ոք ոչինչ չէ խօսել, բայց ես աւելորդ չեմ համարի, այսուհետեւ իմ կարողութեան չափ խօսել այդ դատաւարի պետերի մասին, և յուսով եմ որ դուք էլ, յարգող խմբագիր, չեք խնայի ձեր պատուական թերթի էջերում, երբեմն տեղ տալ իմ յօդուածներին:

Այժմ խօսեմք առաջին նիստի վրա, որ յուլիսի 31-ին նախագահութեամբ ստալինայի կայացաւ Ներսիսեան հին ուսումնարանի դահլիճում:

Հրամանաւ նախագահ և ոտարչնա Նաումէն-Կոյի Թիֆլիզի ամենայն հիւանդը պէտք է ներկայ լինէին այդ նիստին, բայց ցաւօք սրտի կը յայտնեմ, որ այս անգամ հազիւ 1/3 մասը ներկայ գտնվեցաւ. յուսով ենք որ միւս անգամ բոլորեքեան ներկայ կը գտնվին և կը պահպանեն իրանց իրաւունքները:

Նիստը կայացաւ 7 ժամին երեկոյեան և հրամանաւ նախագահի ուսու լեզուով կարգադրեցաւ նիստի նպատակը հետեւեալ բովանդակութեամբ: «Վարդնայք. կարծեմ ձեզանից ամեն միւր տուել է իր տարեկան նշանակելու երկու բուրջ (ստոլի փող) իմ նախորդներին, բայց ցաւօք սրտի կը յայտնեմ որ այդ գումարը մեղ ոչ մի օգուտ չէ բերել, և թէ ուր է գնացել:— չը դիտենք:

Այս չեմ ցանկանում նոյնը անել, ինչ որ արել են մինչև այսօր ուրիշները, թէն այսօր ես ձեր ստալինայ եմ, ձեր մեծն եմ, բայց ձեզանից ամենայն մի անհատ երբ և ինչ ժամանակ կամենայ կարող է գալ մեր վարչութեանը և ինձանից հաշիւ պահանջել, որին և ես մեծաւ ուրախութեամբ կընդունեմ:

Իմ կարգադրութիւնները հետեւեալներն են: 1) Այն անձը որ ինքն տէր է և իր համար սեփական քար խաւաւ ունի, տարեկան պէտք է տայ մեր կամային երկու բուրջ: 2) Այն անձը, որ ուրիշ իշխանութեան ներքոյ է (պնդմատութիւն), նա տարեկան պէտք է տայ մի բուրջ: 3) Երբեմն մեր համբարը ի վարձատրութիւն

ստանում է հանգուցեալների տէրերից մի գու- մար, որի կէսը պէտք է մանէ մեր կտանու- 4) ինչ ասուցանքներ որ մեր վարչութիւնից առն- վին, նոյնը պէտք է կտանու մանի:

«Արեւմտեան աշխարհում ժողոված գումարը երբ կը հասնի մի քանի հարիւրի, մենք կարող ենք առկոտով տալ տեղւոյն լաւաներում, կամ վերցնել շահաւէտ գրաւակաւները: Այսպիսով յուսով եմ որ մեր համըարը ապահով կը լինի գրամական կողմից:

«Բայց թէ արդեօք ինչ է իմ նպատակը այս- պիսի մտքեր յայտնել ձեզ, ահա՛ կարծեմ ձեզ բոլորիդ քաջ յայտնի է, որ մեր համըարում կան աշխարհի արհեստագործներ, որք չունեն գրամա- կան միջոցներ առաջ տանելու իրանց արհեստը, վասնորոյ զիմում են ունեւոր անձանց և վերց- նում առկոտով փող, որ և մեր արհեստագործը չէ կարողանում վճարել և մնում է յաւիտեան նորա մօտ ստորեկ, բանում է օրական կէս գնով կամ իր շինած ապրանքը, կաշ-կարասիքը (մէքէլ) տալիս է կէս գնով: Արեւմտեան թէ՛ մենք կունե- նանք մի կապիտալ, այն ժամանակ այդ արհես- տագործները, այլ ևս չեն զիմի ուրիշի և երկա- պատիկի, քառապատիկի առկոտով փող չեն վերց- նի, այլ կը վերցնեն մեր կատայից փողը տոկո- սով և իրանց կարողութեան չափ իւրաքանչիւր շարաթ կամ ամիս քիչ, քիչ կը վճարեն, ինչ- պէս առ հասարակ վճարում են մասնաւոր կա- տորներում:

«Եւս պարտնայք մերնիստի միտքը. ուրեմն հա- մաձայն էք, թէ ոչ: Ամենից լովեցաւ Համաձայն ենք» խօսքը: Վերջացնում եմ նամակը յաջողու- թիւն ցանականալով պ. Նատուէնկօին այդ գոր- ծում և յուսով եմ, որ այդպիսով կազմանք մեր ինքզ արհեստագործներին հարուստ կապիտալնե- րի սուր ձանկերից:

Գ. Շահմերդեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզանից անկախ պատճառներով «Մշակի» այսօրվայ համարը ուշացաւ և փոխանակ վաղ առաւօտեան դուրս գալու, այժմ է միայն հրա- տարակցում: Այսօրվայ համարը մենք այսօր չը կարողացանք ուղարկել փոստը, մեր գաւառա- կան բաժանորդներին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ անց գրում են: «Գրիգոր Նիկողոսեանի յօդուածները լաւ տպագրութիւն են անում մեր հասարակութեան վրա: Ուրախա- լի է, նոյնպէս, որ և Կ. Պօլսի հայերը իրանք սկսում են այժմ մտաբերել իրանց պակասութիւն- ները»:

Գուրս եկաւ Ս. Պետերբուրգում «Новая Газета» լրագրի առաջին համարը, պ. Վ. Մօզէստօ- վի խմբագրութեամբ: «Голосъ» լրագրին գրը- ված բաժանորդները կը ստանան այդ թեր- թը «Գօլոսի» դադարման ամբողջ ժամա- նակ: «Նոր լրագիրը» իր առաջնորդ յօդուա- ծում ասում է որ դիտաւորութիւն ունէր հրա- տարակցել միայն այն ժամանակ, երբ մա- մուլի օրէնքները աւելի որոշ և օրինական կը դառնային, չը նայելով որ խմբագրութիւնը վա- ղուց է որ ստացել էր թոյլտուութիւն իր թեր- թը հրատարակելու: Բայց այժմ երբ «Голосъ» առկալեցաւ դիմաթափ լինել, խմբագրութիւնը իր պարտաւորութիւն է համարում նրա տեղը բռնելու և պահպանելու նոյն զրօշակը, որ պա- ցանում էր «Գօլոսի» իսկ այս զրօշակը, բացառ- րում է պ. Մօզէստովի, յուսաւորութեան, հայ- րենիքի քաղաքական, հասարակական և բարոյա- կան վերանորոգութեան զրօշակն է:

Ա.Ա.Լ.ՅԵԼԵՆԻՅ անց գրում են: «Օգոստոսի 1-ին պ. պ. Աղաման, Սաֆրազեան և օրիորդ Վարդանուշ, մասնակցութեամբ թատրոնաւէր պ. պ. Տէր-Գրիգորեանի և Պապոյեանի, ներկայա- ցում տուեցին քաղաքային կրթութեան Երկապի- շամբէտ ողբերգութիւնից մի տեսարան և «Ըն- տանեկան փոթորիկ» կատակերգութիւնը: Անտ- րակտներում կարգացին մի քանի բանաստեղ- ծութիւններ: Գամուռ-Բաթիպայի ժողովուրդը շատ չը կար Տեղերի գնելը քարձը էին նշանակված: Ամիս 6-ին նոյն խումբը ներկայացնելու է «Արշակ II» ողբերգութիւնը»:

Ախայցկայից անց գրում են որ օգոստոսի 5-ին կոնսիստորիան հարամաւորել է՝ ընտրել ժողո- րդի կողմից չինգ հաշտութենէր և հոգեւոր կա- ռավարութիւնից երկու քահանաներ, պ. Վան- ցեանցի հայրենիքը ընտրու համար և օրէնքի հա- մաձայն արդիւր դնել նրա կայքերի վրա: Թղթա- կիցը աւելացնում է որ լաւ կը լինէր որ ժողո- վուրդը չինգ հաշտութենից գոնէ երեքը ընտ- րէր նոյն իսկ հարցը զարթեցնող պարտնեքից, իսկ հոգեւոր կառավարութիւնից ձեւաբաւութիւնը պաշտպանող քահանաներին:

«Новая Газета» հաղորդում է որ կոմս Կուտայ-

սով ընդունեց այս օրերս խարկովում հրէաների մի պատգամաւորութիւն և երկար ժամանակ խօ- սակցութիւն ունեցաւ հրէական խախտմ պ. Սե- րապի հետ:

«Русский Курьер» լրագրին թիֆլիսից գրում են, այս օրերս դադարել է «Փորձ» ամսագիրը, որ հայոց ամսագիրներից միակ փոքր ի շատէ օրինաւոր էր: Նրա դադարման պատճառը վե- րաբերում են հասարակութեան անտարբերու- թեանը: Խմբագրութիւնը կրից 14,000 րուբլ վը- նաս: Պէտք է աւելացնել, ասում է ռուս թեր- թը, որ հասարակութեան անտարբերութեան պատ- ճառներէց մինչ էլ ցէնզուրական ծանր պայման- ներն են»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻԱ

Տունիսից ստացված տեղեկութիւնների համեմատ ամեն տեղ հանգստութիւն է տը- րում: Հաստատ խուզարկութիւններից յե- տոյ երեւեցաւ, որ վերջին ժամանակներում տարածված երկիրը չափազանցաբար էր: Լաւագուցի մէջ օգոստոսի 2-ին Փրան- սիական զօրքերը ափ իջան և մեծ պա- տուով ընդունվեցան: Մի փոստային շոգե- նաւով բերեցին տունիսից 300 փախստա- կան զինուորներ: Նրանք անբաւական էին երբ տեսան Փրանսիական զօրքերին և յայ- տնեցին, որ նորից կը փախչեն, որովհետեւ բէյը Փրանսիական զօրքեր է հրաւիրել և իրանք այլ ևս նրան հարկաւոր չեն:

Մի քանի թղթակիցներից հաղորդած տեղեկութիւնների համեմատ Տուրի մէջ արտասանած Գամբետայի ծառը ցանկալի ազդեցութիւն չէ գործել լոռնիքի վրա: Ճառի արտասանելու ժամանակ մի քանիսը մինչեւ անգամ բողբոջ են, երբ Գամբետա տա ասել է, թէ անհրաժեշտ է վերաբնե- նել սահմանադրութիւնը սենատը փոփո- լելու համար: Ներկայ եղած հասարակու- թիւնը պատկանում էր չափաւոր տարրերին և պատուում էր Գամբետային իրեն Փը- րանս-դերմանական պատերազմի ժամանակ յայտնված ևուսնդտ ազգասէրի և ոչ թէ իրեն ներքին նշանաւոր վերանորոգութիւն- ների կողմակցին: Չափազանց ողևորված ծափահարութիւններով ծածկվեցան Գամ- բետայի ձառի այն մասերը, որոնցով նա գովում էր հանրապետութեան նախագահ- Գրիվին: Ֆրանսիական մամուլը զանազան կարծիքներ է յայտնում Գամբետայի ըն- տրողական նախադի մասին. արմատական լրագիրները հաւանում են նրա ձառը, իսկ մի քանի միլիտարական չափաւոր լրագիր- ներ, որոնց թւում է «Temps», գովում են: Սենատի փոփոխվում մասին յայտնած մտքերը անհանդիստ են անում Գրիվին շրջապատող հանրապետական շրջաններին: Ինչպէս իրեւում է, Գամբետա ցանկանում է, որ Ֆրանսիական պատգամաւորների ժո- դովի ապագայ մեծամասնութիւնը արմա- տական ձախկողմեաններից լինի կազմ- ված:

«République Française» լրագիրը հա- ղորդում է, որ Գամբետայի նախագահու- թեամբ ընտրողական մի մասնաժողով է կազմված: Գրանից երեւում է, որ Գամբետա յանձն է առել ընտրութիւնների ան- միջական առաջնորդութիւնը: Լրագիրները շատ են խօսում այդ մասնաժողովի մասին, որ չէ յայտնում ոչ իր նախագիծը և ոչ իր անդամների անունները: «National» լրա- գրի կարծիքով, այդ մասնաժողովն էլ մի ապացոյց է, որ Գամբետա պատրաստում է իր գիտատուրան և որ պատգամաւորների ապագայ ժողովի մէջ կը տիրապետէ «Հան- րապետական միութիւնը» Գամբետայի ա- ռաջնորդութեամբ: Նանտի մէջ Գամբետա

շուտով մի ձառ կը խօսի պետութիւնը և կեղեցուց բաժանելու և զինուորական հիմ- նարկութիւնների մասին:

Սպանիական կառավարութիւնը գանգատ- վեց Ֆրանսիայից, որ իր հիւպատոսի տունը Սֆակի մէջ կողոպտված է: Բարտեյմի Սենտ-Իլեր պատտասխանեց, որ այդ գործի մասին դեռ ևս պաշտօնական տեղեկու- թիւններ չեն ստացված և պատրաստակա- նութիւն յայտնեց ընդել գործը և պատժել մեղաւորներին: Արդէն մի գեներալ է ու- դարկված Սֆակի քննութիւն կատարելու համար:

«Morning Post» լրագրի տեղեկութիւն- ների համեմատ Տունիսի մէջ ապրող անգ- լիական և իտալական հպատակները մի ինդրագիր են պատրաստում, որ բացի ի- րանց կառավարութիւններից կողարկի և Ֆրանսիային և որով նրանք ցոյց են տալիս, թէ եւրօպացիների դրութիւնը վտանգաւոր է, քանի որ արաբները անգաղաք արշա- ւանքներ են գործում:

ԳԵՐՄԱՆԻԱ

Մի քանի գերմանական ազատամիտ լրա- գիրներ վերջին ժամանակներում սպառնա- ցող անստորագիր նամակներ են ստացել, որոնք ըստ երեւոյթին ուղարկված են հա- կահական շրջաններից: Այդպիսի նամակ- ներից մէկը հրատարակված է «Berliner Tageblatt» լրագրի մէջ: Նամակի մէջ աս- ված է, թէ, ի՞նչ է իշխան Բիսմարկի կան- լի դէմ որ և է փորձ լինի, մահուան պատ- ժի կենթարկվին թշնամի կուսակցութիւն- ների ներկայացուցիչները՝ առաջադէմները, ազատամիտները և հրէաները այն քաղա- քի մէջ, որտեղից կը ծագի այդ յանցաւոր փորձը և որ այնուհետեւ մի ընդհանուր կտորած կը սկսվի, որին զոհ կըրթան կայ- սերական կառավարութեան թշնամի ազա- տամիտ գործիչները: Այդ նամակից, որին լրագիրները ոչինչ նշանակութիւն չեն տա- լիս, այնու ամենայնիւ երեւում է այն գրող- ված զրուցիւնը որի միջ գտնվում են թըշ- նամի կուսակցութիւնները Գերմանիայի մէջ: Այդպիսի արիւնարբու սպառնալիքների կա- ղելութիւնը միայն ցոյց է տալիս գերմա- նական ներքին գործերի չափազանց լար- ված դրութիւնը:

Հատ տեղիւրում գեռ ևս շարունակվում են հրէաների դէմ ուղղված անկարգութիւն- ները: Վարդներուրդի և Նստորդի մէջ մեծ դժուարութեամբ վերջ գրին անկարգու- թիւններին և դա էլ եղաւ միայն այն ժա- մանակ, երբ հրէաների բոլոր տները և ա- ղօթարանները բռնկված էին:

ԳԱՄԲԵՏՍՍՅԻ ԶԱՌԸ

Տուրի մէջ ի պատիւ Գամբետայի առաւ- րանկիտի ժամանակ նա արտասանեց հե- տեւալ ձառը: «Տաս տարի սրտնից առաջ, ասաց նա, թշնամուց զրաւած, գրի՛մէ օր- հասականին հասած Ֆրանսիան ստիպված էր սատակի պատիժ կրել, որովհետեւ մի մար- դու ձեռք էր ընկել: Այստեղ, այս քաղա- քի մէջ հրէահրէեով շրջապատված ամեն- քը, թէ գիւղացիները, թէ քաղաքացիներ- քը, թէ արհեստագործները հասկացան, որ ին- վիշտ լինում է նրա զինուորական փառքի և արտաքին ոյժի անկումը և ներքին անիշ- լանութիւնը: Այդ դասը ամենք յիշողու- թեան մէջ դրօշմվել է անջնջելի գծերով: Մեր ժողովուրդը կարող է իրան աւելի բաղաւոր համարել, որ նա վերջնականա-

պէս չը ոչնչացաւ այդ սարսափելի դժբաղ- դութիւնների ժամանակ: Բայց Ֆրանսիան, պարոններ, ևս ասում եմ Ֆրանսիան և ոչ թէ այս կամ այն մարդը, դարձեալ ինքն իրան պաշտպանեց: Նա ամբայաւ անդուն- դի ափին և կարողացաւ ազատվել, վերա- նորոգվել և նորից բռնել իր բարձր դիրքը աշխարհի մէջ: Գրա համար նրան բաւա- կան էր գիմել իր ազգային ոգուն և յայտ- նել, որ նա ձանաչում է միայն մի իշխա- նութիւն, մի կամք— իր սեփական կամքը: Ամբողջ ժողովրդի այդպէս յանկարծակի կերպով արթնանալուց յետոյ ահա տաս տարի է, ինչ Ֆրանսիան հաստատ և ա- ռանց շեղվելու գնում է իր ձանապարհով, շրջապատված լինելով ներքին և արտաքին դժուարութիւններով, զանազան կուսակցու- թիւնների ինտրիգներով, որոնք թէպէտ յաղթված են, բայց դեռ իրանց յայտը չեն կորցրել: Այդ կուսակցութիւնները կազմ- ված են եղել ամենաճարպիկ, համարձակ և ազդեցութիւն ունեցող տարրերից: Եւ ի՞նչն է ցոյց տալիս Ֆրանսիային ձանապարհ, ի՞նչ է պահպանում նրան այս բոլոր ար- գելքների ժամանակ: Հանրապետութիւնը, որ հասարակական ազատութեան միակ և ճշմարիտ նշանաբանն է: Այդ ճշմարտու- թիւնը անհերքելի է: Այդ բանը ապա- ցուցանում են մեր վերանորոգված հիմնա- կութիւնները և կարգերը, մեր լաւ գրու- թեան մէջ դրված Ֆինանսիերը, մեր վե- րականգնված զինուորական հզօրութիւնը: Ինչ ուզում են ասեն յաղթված կուսակցու- թիւնները, այնու ամենայնիւ դա իրողու- թիւն է. բայց դրա մասին մենք մի ուրիշ անգամ կը խօսենք: Բացի այդ, կենսական ոյժերի հարստութեան այդ զարմանալի ա- պացոյցը վերադարձեց Ֆրանսիային ամբողջ աշխարհի համակրութիւնը և զարմանքը և մինչեւ անգամ մի քանիսի նախանձը շար- ժեց: Ուրեմն մենք կարող ենք համարձակ ասել, որ այս տաս տարիների ընթացքում Ֆրանսիան վերաստեղծվեցաւ թէ նիւթ ա- պէս և թէ բարոյապէս: Նա վերաստեղծ- վեցաւ հանրապետական դրօշակի տակ, հանրապետական սկզբունքի ոյժով, ժողո- վուրդի օգնութեամբ որ վերջնականապէս իր ձեռքն առաւ երկրի բոլոր գործերը, ո- րոնք այդպիսով ամենքի և իւրաքանչիւրի գործերը դարձան: Եւ այդ իրողութիւնը այնքան տխրեւ է, այնքան աչքի է ընկ- նում, որ մինչեւ անգամ հանրապետութեան հակառակորդները, նրա թշնամիները և ան- տարբերները սկսում են համոզվել, որ Ֆրան- սիայի համար առանց հանրապետական կա- ռավարութեան ոչ ապագայ կարող է լի- նել, ոչ յոյսեր, ոչ զարգացում և ոչ ա- ձումն: Տեսնում էք դուք այդ զգգված հին կուսակցութիւններին: Տեսնում էք դուք այդ ձանապարհը, որ ծածկված է միապետութեան ողորմելի աւերակներով: Գեռ ևս տաղանդի փայլ, փառաւոր անցեա- լի ազդեցութիւն ունեցող մարդիկ յանձնե- ցին իրանց զրօշակների ցնցոտիները անըն- դունակ և անզոր մարդկերանց: Այո, հան- րապետական կարգերը և հանրապետական ոյժը անյաղթելի են դարձել: Այնչէ նշա- նակութիւն չունի այն հանգամանքը, որ մի քանի նահանգների մէջ յաղթութիւնը խըլ- վում է ձեր հաւատարիմ ներկայացուցիչնե- րի ձեռքից, հաւատացեք, որ, երբ կըս- կենք հակառակ կողմերի ոյժերը չափել, կը տեսնենք, որ հանրապետութեան հա- կառակորդների կողմը մի քանի օֆիցերներ միայն ֆիտցել են, իսկ զկուսուր ոյժերը՝ զինուորները հանրապետութեան կողմն են: Տեսնելով հանրապետութիւնը, որ այդքան հրաշքներ է գործել, որ հնազանդեցրել է

ամենամեծ հաջողութիւններն, միայն իր կարելի է մտածել, որ նա չի կատարել իր խոստումները, որ նա յետ կը մղի ժողովրդի սիրտը և չի արդարացնի նրա յոյսերը, որ նրա կառավարութիւնը հասարակական ազատութեան կառավարութիւնն չի լինի, որ նա առաջադրում լինան կառավարութիւնն չի ունենայ: Եւ այժմ երբ մեր ուղեւորի տակ հաստատ հող եւր զգում, որ իր մեք անհրաժեշտ կարող ենք ընթանալ, մենք պարտական ենք շնորհակալ լինել մեր նախորդներին, 1848 թուականի գործիչներին, որոնց վիճակից առնանք մեր պատերազմը և ընդդիմադրութիւնը: Նրանցից շատ քան չէր արժանացան դաւանայ, պատիւներին: Շնորհակալ լինենք և յարգանքով վերաբերվենք պետութեան գլուխ անցած անհրաժեշտ մարդուն և Ֆրանսիայի առաջին քաղաքացուն, ժիւլ Գրեվին: Բայց ի՞նչ բաներ չեն հնարում այդ գործի մասին: Կարող եմ ձեզ հաւատացնել, որ ես անուշադիր եմ թողնում իմ հակառակորդների անկարողութիւնները: Նրանք ինչ չեն վերաբերում, այլ ընդհանրապէս ուրախացնում են, ապացուցանելով իմ ժամանակակիցների վառ երեւակայութիւնը: Գուցէ կասեն, որ այժմ էլ ես երեսպաշտութիւն եմ անում: Աւելի վառ այդպէս մտածողների համար, ես իմ կողմից պարտականութիւն եմ համարում հանրապետութեան կառավարչի մասին յայտնել վերոյիշեալ կարծիքը: Ամենից առաջ ես իմ երկրի ծառան եմ և, եթէ ես երբեք յաղթված եմ լինում, ես իմանում եմ, թէ զրանով եմ եմ պարտական իմ զէմ միշտ մի և նոյն մարդիկ են, միշտ աջակողմաններն են: Ճշմարիտ է նրանց թուումն էլ կան ազնիւ, բայց մոլորված մարդիկ, բայց միշտ պէտք է փնտռել անաշուղտութեան պատճառները, պէտք է այդ անաշուղտութիւնների առաջն առնել իմանալ: Խօսելով սենատի վերանորոգութեան մասին, Գամբետտա ասաց, ինչ յայտնի են սենատի բոլոր պակասութիւնները, նրա գործած բոլոր սխալները, բայց յայտնի է նոյն պէս և այն, որ այդպիսի հիմնարկութեան օգտակարութեան մասին անկարելի է դատել մի քանի շաբաթվայ և մինչև անգամ մի քանի տարիների փորձից: Ազգային երկու ժողովների կողմնակից լինելով, ես չեմ կարող փոխել իմ համոզմունքը պատահական մեծամասնութեան սխալների և ինտրիգների պատճառով: Ես միայն ցանկանում եմ, որ ազգային երկու ժողովներն էլ միակերպ ժողովրդական ոգի ունենան, որի վրա հիմնված է հանրապետութեան գործութիւնը: Այլ խօսքով ես ցանկանում եմ, որ սենատը մնայ: Բայց որովհետեւ քաղաքականութեան մէջ անպատիւ ոչինչ չէ մնում, իսկ սենատը նշանաւոր սխալներ է գործել, ուրեմն նա էլ պատասխանատու կը լինի այդ սխալների համար: Անհրաժեշտ է սենատի անդամների ընտրութեան ձևը փոփոխել:

Սահմանադրութեան փոփոխման անհրաժեշտութեան մասին խօսելուց յետոյ Գամբետտա ասաց, «Հինգ տարի առաջ ինչ ջնորարան էին անուանում, որովհետեւ ես առաջարկում էի հարկեր որոշել եկամուտի համեմատ: Ես այդ կարծիքին հաւատարիմ եմ մնացել և կարծում եմ, որ աւելի օգտաւէտ է այդ հարցով զբաղվել քան թէ կորցնել ժամանակ զանազան երթուղիների համար այս կամ այն կուսակցութեան վերաբերութեամբ: Այժմ, պարտենք, մնում է միայն սպասել, արդեօք ազգային ընտրութիւնները կարողացան մեր յոյսերը թէ ոչ ես կարծում եմ, որ

մեր յոյսերը կարողանան, բայց հաստատ չեմ կարող ասել: Եւ տեսնենք, թէ երկրորդ ինչպիսի կարծիք կը յայտնի: Մենք ամենքս էլ կը հպարտակենք այդ վճռին և հաստատացած եղէք, որ ինչ տեսակ վճռէլ կայանայ, ոչ իմ և ոչ իմ բարեկամների մէջ չի ծագի վերաբերման ինքնավարութեան զգացմունք: Եթէ մինչև անգամ եւ թաղերը, որ մեր մէջ անհամաձայնութիւններ կը ծագեն, դրանք էլ այնպիսի չեն լինի, որոնց Ֆրանսիան անկարող լինի ներել:

Մեր մէջ կարող է տեղի ունենալ միայն մի տեսակ մրցում. մենք կարող ենք մրցել մեր պարտականութիւնները լուր կատարելու համար և ոչ թէ իշխանութիւն ձեռք բերելու համար:

Գամբետտայի ծաղր անդադար ընդհատվում էր աղմկալի ծափահարութիւններով:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԳԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 2 օգոստոսի

Մեր մինչև հիմա գրած նամակներից, գուցէ Մշակի ընթերցողները մի կանխորոշ պետութիւնով տեսնեն իմ մէջ Կ. Պոլսի հայ գործիչներին մասնաւոր ժամուրդ վերաբերմամբ: Տեղի չը տալու համար այսպիսի կատարածանայ, ես աւելի հանգամանքօրէն կը խօսեմ այս անգամ Կ. Պոլսի քաղաքական վրա, առնելով նրա առաջին ներկայացուցիչ Մասիսը, որը իրանով այնչափ յափշտակված է, որ բոլոր ուրիշ քաղաքներ, ի հարկէ և ռուսաց, անուանում է petits journaux: Ի միջի այլոց պիտի նկատած, որ այսպիսի ֆանթազմական ինքնաշարժակութիւնը սեփական է մասնաւոր Կ. Պոլսի բնաւորութեան, որով և կը տեսնէք քաղաքի անհատներ, որոնցից իւրաքանչիւրը ունէ իր վրա մինչև խեղճարութիւնը չափազանցած համարում: Երբեք ունէր գուր ձեր աչքի առաջ Սոփիստիկ անհատներ...

Բայց այսչափ մեծ կարծիք ունենալով իր վրա Մասիսը արդեօք ինչ է կատարել իր 34 տարեկան գործունէութեան մէջ, այս է հետաքրքրելու: Ունենալով իր վերնագիր չորս չոր քառեր՝ «քաղաքական», «ազգային», «քաղաքական» և «ընդհանրական» այս քաղաքը չունէ ոչինչ համարադրական իրաւունքներ: Երբեք, քաղաքական» առնելով, նա երբեք չէ յայտնած մի ինքնուրույն տեսակետ, մի առաջնորդող և նախադրող քաղաքական մտածմունք, իրերի և հանգամանքների վրա մի նոր լոյս սփռող և բացատրող դատողութիւն, այլ, ինչպէս այդ վկայում են նոյնպէս բոլոր ձեռնարկ և հեռու մարդիկ: 34 տարեկան մէջ Մասիսը միայն եղել է ժողովի պատճէն և թաղամասնական այտուղ հրատարակող օտար քաղաքի Մեղաւոր է արդեօք արանից յետ ժողովուրդը, երբ հայ լրագրութիւնը թողած, նա օտար քաղաքներ է կարդում:

«Ազգային» առնելով արանք հասկանում են միայն այս ինչ առաջնորդի վարքագիծը: Երբեք, քաղաքական իրաւունքները, ինքնակա վարձարեւի իրաւունքները, իսկ այդ ամենն էլ ունենալով իրանց համար մի առանձին եկամուտների աղբիւր, որովհետեւ կողմնորոշութիւն անելով և գովելով այս ինչ առաջնորդին, քաղաքը անպատճառ նրանից հարուստ բարձր է ստանում, ինչպէս այդ խիստ սովորական և բնական բան է դառած այտուղ, գովեստներ թափելով որ և իցէ մի վարձարանատը վարձարեւի վրա, քաղաքը ունէ ի հարկէ նոյն բարձր: Այս լրագրութիւնը աւելի լուր պարզելու համար, հերքել է առնել այն, որ իւրաքանչիւր հայ խմբագիր ունէ իր կանոնաւոր ամսական եկամուտը բոլոր ազգային ամսական հաստատութեանց մէջ պատրաստարանից սկսած մինչև Միացեալ ընկերութիւն: Մասիսը օրինակ Միացեալ ընկերութեան մէջ ունէ տարեկան վեց բաժանորդութիւն, որ կան 12 օսկի կամ մօտ 125 ռուբլ: Թերթիներն չէք բարձր լրագրութիւնը նմանապէս: Այսպիսի բաժանորդագրութիւնը քաղաքական ամսական հաստատութեան կողմից ոչ այլ ինչ է, եթէ ոչ պատուաւոր կաշառ, որովհետեւ վեց հատ օրինակ գովելով մի և նոյն քաղաքը, նախ ամբողջութեամբ

թեամբ այդ վեց հատն էլ չէ ստացվում, երբեք չէ կարողացվում: Անհայտ կերպ է հայ լրագրութեան վարձուքը և իւրաքանչիւր հայկական մեծ անցքի և ճգնաժամի մէջ, օրինակ հակահայտնեան վերջին յաղթութեան ժամանակ, տեղեակ անձերի ասելով Մասիս և իւր թիւմէն, իւրաքանչիւրը ստացել են ամսական օսկի բութ 2 Պարսեանի բարձրագույն ձեռքով, որից յետ ի հարկէ սկսել են փառաբանել և բեկվայ զլատակ և հրաւածան: Կողմած Ազգային ամսական հայկերէնի վերջին յաղթանակը: «Ինչպէս ամսական հայկերէնի վերջին յաղթանակը» կոչվում էր այս ամսին վրա և 15 ամսական հասոյթը, որը ունէ գունդ Մասիսը Բ. Դանիկ իւր թէ պաշտօնական յայտարարութիւններ տպելու համար—կարող էր մի փոքր զաղափար կազմել սոցա «ազգայնական» և «հրապարակախօսական» յայտարարութեանց վրա:

Իսկ ինչ կը վերաբերվի մեր վեր առած առաջին հայ քաղաքի «քաղաքական» և «ընդհանրական» մասի վրա, էլ զբա մասին խօսելով աւելի լայն է. հերքել է, որ Մասիսի քաղաքական մասի մէջ տեսնէք «Կրթական» (Կրթական) «Հրապարակ» և այն մականունները, կարգաւ մի երկու անգամ այս ցնորախօս տիրացուների անխնայ բարբառնողը, որ հասկացողութիւն կազմել թէ ինչ ասել է սոցա մէջ բանասիրական գործիչները: Երբեք ինչպէս խնայող և խնայող լրագրութեան մէջ ազգային գործերին իր թէ «ազգայնական» տեղը, որը կայանում է նրա մէջ, որ ինչ տեսակ անպատիւ գովատանքների ասել կը չապրեն: Երբեք մի միմյանց առաջ իրանց այս իրաւունքները խօսքով «սամաւորներ», «ազգայնական» լրագրութեան, «Հրապարակ» և այլն այսպիսի խաղաղական բաներ անուանելով: Անհայտ ցնորախօս ուղղութեամբ են դատարարվում Կ. Պոլսի վարձարաններում հազարաւոր թշուառ երկտարարներ իւրաքանչիւր տարի կատարելով միջանաքալիութեանց, ցնորախօսական ձեռնարկներով (ի հարկէ «Կրթական», «Հրապարակ» «Կաթոլիկ» և «Երկրային» վրա) և զանազան խեղճատակ հանդէսներ: Վերաւոր զարգէն Մասիսը և տեսել թէ ինչ տեսակ մեղամաղձառ իմաստները ձեռքեր կը կարգաւ նրա մէջ այս քանի օրերս զանազան վարձարաններում կարգացված. մեղեք այդ ձեռքեր և սրկեցէք նրանց ցուրտ ջրով, տեսել թէ քանի կողմի իմաստ կը գտնէք մէջ. մինչդեռ այդպիսի ձեռքեր խօսողները այտուղի գործիչներից «ամենապայտնի» համարվածներն են: Երբեք մի վերջին քաղաքի անվանաւ ձեռք խօսութեանց այս սովորութիւնը սոցա մէջ. սոված կը կողորովն սոցա, բայց ձեռք խօսելու սովորութիւնը չեն թողնի. փոխանակ իրանց զլիի ձաւը տեսնելու, սոքա ձեռքեր կը դիմեն...

Ինչ է կատարել վերջապէս Մասիսը իր 34 տարեկան գործունէութեան մէջ, կը հարցնեն երբեք սոցա, բարձր հետաքրքրութեամբ—սորանի հայերէն քառեր է սովորեցնում մեզ, կը լինի պատասխան: Եւ իրաւ, ինչպէս ինչ յայտնի է, յիշեալ քաղաքի ամենամեծ պարծանքը այն է, որ նա բնաւ չը հայկերէն իր դարձակ լրագրութեան, միշտ նոր նոր հաստատական բաներ և դարձուածներ կը հնարէ ու մէջոս կը հանէ, սոցա համար ամենից առաջ երկու բան՝ բարձր և քառեր, էլ մնացածը մի բան չարժէ: Ունենալով այսպիսի ընթացք, սոքա դեռ ոչ ոք ունեն երբեք չը հաւանել ռուսացներին, ասելով թէ նոցա քաղաքները և ինտելլիգենցիան «անարժէք» բաներ են. ահա արդարեւ այսպիսի գաճաճներին պիտի ասած, որ եթէ լեզուն չը լինի ազգային երկրից կը տանէ, ինչպէս փուչ ձու կամ ընկղզ...

Քաղաքների գոյաբանութիւնը և կաշառակերութիւնը ունէ իր հետեւողներ և ազգային ժողովի մէջ, բայց թէ ինչպէս և ինչպիսի, այդ ամենը քաղաքները շատ երկար պատմութիւն կը լինի. հերքել է յիշել միայն մի հատ օրինակ, որ Ստեփան Փալապեան ասված երկրպետը, որի մասին արդէն գրել էի անցեալները, «ինչ մի ուրիշ գործով չը պարագլխելով, բայց միայն «ձեռք» երկրպետութեանց ազգային ժողովի մէջ կարողացել է մի քանի տարեկան մէջ երբեք մեծ տուն կառուցանել, երբ նորան հարցնում են թէ որ տեղից գտաւ փող, առանց կարմրելու նա պատասխանում է համարով կնիստ օրինակ, մինչդեռ յայտնի է որ օրինակ մօթիս ամսական բանից նա ոչինչ խաբար չունէ:

Տեսնելով այսպիսի ընկած համարակալն զբոլորութեան տեսնելով այսպիսի տիրացուական դարձակութիւն և մտաւոր ու բարոյական կատարեալ քայքայումն Կ. Պոլսի ներկայ և ապագայ ինտելլիգենցիայի մէջ, արդեօք ինչքան ըստ ինքեան հարց չը պիտի առաջ գայ. հապա ինչ շիման կէտեր ունենանք մենք սոցա հետ և ինչպիսի ներդաշնակ գործունէութեանց համար լրագրութիւն, երբ մեր ու սոցա մէջ չը կայ ոչ բնաւորութեան, ոչ դատարարութեան, ոչ զարգացման և ոչ մի հասկացողութեան նմանութիւն. մենք ու սոքա այնչափ հեռու ենք միմյանցից, որ իւրաքանչիւր ռուսաց, որչափ էլ լուր արամաղված լինի կանխապէս Կ. Պոլսի հայերին համակրութեամբ վերաբերվել: Տէնց որ սոցա երեսը տեսաւ էլ ոտով ձեռքով «հրապարակ» կասէ սոցանից, մասնաւոր որ ամենեւոր թաւկամ ու մտերիմ համարվածները սոցա մէջ վերջի վերջի կը յայտնվեն նոյն կերպով, խարդախ, նենգ և խարբայ, սոոր արարածները, որոնցից կարծել են թէ հեռու ես մնացել, ընտրելով լաւագոյններին: Ի հարկէ այտուղ ևս կարելի է վերջապէս գտնել ազնիւ և զարգացած անհատներ, բայց որ զբաղաւորար նոքա էլ գրեթէ ամբողջ կեսերը խրոպա անցրած, աւելի հայախօս եւրոպացի են քան թէ հայաժամուրթ մարդիկ:

Այս ամենից յետ բնական է դարձաւ որ կը գտնէք մի և նոյն երաւակալութեան, այն է, թէ ոչինչ յոյս չը կապել և հաւատ չընծայել Կ. Պոլսի բազմաթիւ գործիչներին, այլ եթէ կամք ունենք Հայաստանի հայ ժողովրդին նիւթաւորապէս ու բարոյապէս օգնելու, այդ անհրաժեշտ զալի Հայաստանի ժողովրդին ձեռք մեկնելով, այլ ոչ թէ Կ. Պոլսի մի տեսակ կայարան ընտրելով մեզ համար: Իսկ եթէ սա ժամանակ կարող չենք ուղղակի գործ ունենալ Հայաստանի ժողովրդի հետ, այդ ժամանակ դարձաւ հարկաւոր է որոնել մի ուրիշ միջոց, քան թէ դառնալ խաղաղի Կ. Պոլսի դարձակախօս և իմաստակ տիրացուների ձեռքին, որոնք կողմում են «գործիչը»:

Կրկնոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 5 օգոստոսի «Прав. Вѣст.» լրագրի մէջ տպված է. «Страна» լրագրի տեղեկութիւնը մեկնելու համար Սարատովից հաղորդում են, որ մայիսի 18-ին զիշերը Սարատովի մէջ եղած երկու հիտեակ գունդերի գործողները վրդովացուցիչ բովանդակութեան ազգարարութիւններ են գտնված, որոնց գտնուող գիտնորները հասցրին իրանց իշխանութեանը: Հրատարակված է Բարձրագոյն հրաման խրեւոյի ձիարշախ անուանումը ոչնչացնելու մասին: «Новая Газета» լրագրի հաղորդում է. քանդակագործ Ջիմով վերջացրել է Տէր Հանգուցեալ Կայսրի արձանը: Սրանք ձեռքով ժամանակ նա օգուտ քողից այն զիմակից, որ հանված էր Թագաւորից նրա վախճանիկուց մի քանի ժամ յետոյ: Կայսր պատկերացրած է մեղերով և էպոքանեւրով Գեորգիան աստուղի, Գեորգեան խաղով և պրուսական pour le merite շքանշանով: Օգոստոսի 6-ին Կայսրի Բարձրագոյն ներկայութեամբ Պետերգրադի մէջ նշանակված է Պրեօբրոճեանի գունդի կեկեղեկական գօրծաղ: Գոգոյի կրտսերին բացու մը Նիմիի մէջ կը կայանայ, սեպտեմբերի 4-ին: «НОВОСТЕ» լրագրի լսել է, որ օրինակ կը հրատարակվի գիտնորական բժշկական անկողնի մի կանոնադրութիւնը, որ փորձի համար կը գործադրվի երեք տարի:

ԱՍՇԻՆՆՑՈՆ, 5 օգոստոսի: Գարջիկի դուր լինելը, որ վերջին ժամանակներում վատացել էր, նորից յուսալի է դարձել:

ՓԱՐԻՋ, 5 օգոստոսի: Փարիզի մէջ ընտրողների ժողովում Գամբետտային թշնամական ցոյց կատարվեցան: Դիմողներ և աղաղակները լիցիլ չը տուին Գամբետտային խօսել: Պաշտօնապէս յայտնված է զօրքերի գումարումը այլ ևս չի լինի:

ԼՕՆՈՆ, 5 օգոստոսի: Ե. յիւր-խանի գործերի մէջ անբաւականութիւնները շարունակվում են:

Խաղաղի—հրատարակող ԳԻՐԻԳՐ ԱՐԲՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գ Ա Ս Ա Ռ - Գ Ա Թ Ի Պ Ա Յ Ի
Բոլոր բանաստեղծությունների ժողովածուն, տպած Մոսկվայում ամենաընտիր թղթի վրայ, հեղինակի վիճագիր պատկերով, գինը 50 կ. փաթակում է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎՃԱՍՈՒՆՈՑՈՒՄ:

Նոյն տեղը փաթակում են հետևեալ նոր հրատարակությունները.

- 1) Ռոբինզոն-Կրուզո՝ Ադանան " 60 կ.
- 2) Աճեղի տոգրակը՝ Լալայան " 10 "
- 3) Մաղկապատի արձ. և չափ. բանից՝ Կոստանան " 25 "
- 4) Ուսուցիչ հայոց լեզուի՝ Նազարեան " 40 "

Վերջին երկու գրքերից գուժարով գնողները նշանաւոր գինում են ստանում:

144 Արժույթով գալերեա 144 ամենաթանկագին արվեստների և նախապատկերների

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦУНИ ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ ВЪ НАЙМЫ

Въ галлерей имѣются: вода, газовое освѣщеніе и телеграфная станція.
10—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆՈՒՄ

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐ
Գալլերեում կայ ջուր, գազի լուսավորություն և հեռագրական կայարան:
10—10

ԾԱՌԱՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆՔԱՆ ԹԵՆ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կոնֆեկտներ, ԿԱԿԱՍ, բրինձ, ԱՄԱՆԻՂԷՆ, բոկալներ, թասեր, երես լուսնալու ամաններ, չայնիներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (суды), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, գզալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ, այրածներ, ՄԱՀԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍ, տրիկո, պարուսին, թաշկինակներ, երեսբիշներ, կրճուկա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՑՆ, խերես, կոնակ և այլն: ԹԷՑ մեծ քանակությամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԿԸ 44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54 ռ., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:

Մի և նոյն տեղը էժան գտնվ. ՇԵՐԲԵՏ մաշկեղի, խմոր ծԱՐԱԿԻ գէղ, ԽԵՆԱՑԻ գինի ջերմի գէղ, կարթուսի ՓՈՇԻ, հեղուկ և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ փաթեկից տի համար, պարսկական փոշի:

45—100

ՄՈԾԱԿՆԵՐ ԿՈՏՈՐԻՆԵ ԳՈՂԻՆ ԾԱՏՈՒՐՈՎԻ ԼԱՄԸ

Հրատարակությունները Ներսիսի Սիմոնյանից լույս տեսաւ գերմանացի բժիշկ Շերբեթի «Տնային բժշկական մարմամբարկութեան» գրքից: Հայերէն թարգմանությունը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմաթիւ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի: Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախվում է «Կենտրոնական և Կովկասեան գրա-փաճառատներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանանցի մօտ»: Тройцкій пер. типографія Вартачанца, въ Тифлисъ.

ՀԷՆՑ ԻՍԿՈՅՆ ՍՏԱՅՎԵԼ են մեծ քանակությամբ հրացաններ, ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ, փամփուշտներ, ԹԷՑ առաջին տեսակի, բոկալներ և այլն: 204 ԲՈՐ (choke bore) ՀՐԱՑԱՆՆԵՐ George Dau-ի գործարանից 120 ռ., ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ 11 ռուբլուց, 700 ՄԱՀ-ՃԱԿԱԼՆԵՐ 5—40 ռուբլ: Ծախվում է նոյնպէս պարուսին կիսագնով և այրածներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: 10—12

Въ Редакціи газеты «МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.“
Д. Григорія АРЦУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ
Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը
Տեղափոխեցաւ Գ. ան օվսկայա փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՈՅՑԻ փողոցը № 11. Գ. օստատան նաեւ բուշանու ընդունվում են ամեն լեզուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամատչելի գներով:

Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրա:

Խ Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՌՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՅՈՒԹԻ
Տպած մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական գրափաճառատնոցում», «Կովկասեան գրա-փաճառատնոցում» պ. ջաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Նահինեանցի, Բոզարջանցի, Հովսեփեանցի ծխախոտի մազապիւններում: Գինն է 1 ռուբլ. 20 կոպ:



ՎԱՐՇԱՎԱ: Իր յատկութիւններով մարմնի մասերի և մանաւանդ ոտքի մասերի քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը:



ԳԱԼՄԱՆԻՆ
անունով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների գեղատեսիլ և զրօգիտների մօտ: Գլխաւոր գէղս նիւթի հնարող Փարմանցի մազիտարու Վ. ԿԱՐՊԵՆՍԿՈՒ գեղատան մէջն է գտնվում: Վարշավայում, Ելեկտրային փողոց № 35. Գարմանի մեծ արկղիքը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ. պէտք է զգուշանալ խարդախութեանից և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիքը ունենայ զործածութեան մեկնութիւնը և փարիզի աշխարհահայտնի մեզայները: Վ. ԿԱՐՊԵՆՍԿԻ 15—20 (1)

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ (աթոռներ և բողկաթոռներ) ծախվում են մեծ քանակությամբ և մանր, միջին փողոցում Կատարիկոս փողոցի անկիւնում Մ. ԲԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:
Օտարաքաղաքացիք կարող են գիմել այս հասցեով: Тифлисъ, Михайлу Н. Теръ-Никогосову.
52—150

Կերականցեցող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ փերապարձնող: Գինը 2 ռ. շերտ: ՓՈՍՏՈՆՈՎ ուղարկած 2 ռ. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԵՆԱՑԻ ԽԵՂ, մազերը ամրացնող համար, 1 ռ. ամանը գրծին դիտա-յաւի գէղ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 9—100

Արդէն ուղարկեցաւ իւր բաժանորդներին ԲԱՅՈՒԹԻ ԽԵՆԹԸ՝ անու-նով փապաստութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք գիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաբե-Յակոբեանցի տպարանը: ԲԱԿՈՒ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՂ՝ պ. Գրիգոր Բեջանեանցին, Հրատարակչի հասցեն: Шуга, въ конторѣ Армянца АБѢЛУ АН-РԵՏԻԱՆՍՅ՝.

Նույն ազգային-հոգեւոր դպրոցին հարկաւոր է մի ուսուցիչ ուսուցալեզուի և թուրքաւորութեան՝ 600 ռուբ. ուղարկով այլ և հարկաւոր են ուսուցիչներ Ղարապաի և Նույն գիւղական դպրոցների համար: Գանկացողներին խնդրում եմ շուտով գիմել ինձ՝ Շուշի:
Թեմ. վերադասուց Զ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԿ
5—5

Գրիգոր ՏԵՐ-ԱՆՈՍԻԱՆ, որ առաջ բե-նակվում էր Կարս, իսկ այժմ տեղափոխ-վել է Թիֆլիս ընդունվում է իր գերդաս-տանի մէջ Թիֆլիսի ուսումնարաններում ուսանող օտարաքաղաքացի վից ուսանող-ներ, որոց երկը շրջէն պատրաստ են, ամսական 25 ռուբլով: Իմ հասցեն (Արծ-րունու քարվանսարում Գուրգենցի կան-տորը № 93): 3—3

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ համար ՀԱՌԱՏԱՐՄԱՏԱՐ Պ. Մ. ԼԵՐԵԿԻՆՍԿԻ տեղափոխեց իր բնա-կարանը Օրբոփու տանը Կնոտիտուտի մօտ: 4—5

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գտնել ԱՆ-ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ տեսակի Փռնոր 1 ռ. 20 կ. և 2 ռ. և համեմատեալ առաջինը 1 ռ. 60 կ. հետ և երկրորդը 3 ռ. հետ ամեն տեղ ԹԷՑ-ԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիո-կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական ԳԵՐԱՋԱՆ-ՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական խանութը կշռում է ՄԱՔՈՒՐ թէյ առանց թՎԹԻ և ԱՐՃՃԻ: 30—100

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒԹԻ ՌՈՍՈՒՅԻՉ անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՍՑ Գ. ԿԱՐՊԵՆՍԿԻ լույս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրոնական գրափաճառատներում:

Գինն է 40 կոպէս:
Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէ-կով ձեռք բերել, գինը ԿԱՆԻԿ փա-րկով և ճանապարհահատար իր վրա առնելով:
Թող գիմել մեզ հետեւալ հասցեով.
„Въ Тифлисъ. — На Авлабартъ. И-вану Петровичу Назарьянцъ.“

ՎԵՐԱԳՈՒՆՆԵՐ 4 ռ., ծրծղներ 1 ռ., ծաղիկ աթոռներ 1 ռ. 50 կ., ՓԱՑՏ-ԱՌՈՒ 4 ռ., ԲԱԶԱՊՈՒՄ-ՄԱՀԱԿԱԼ 10 ռուբլ. և աւելի, թէյի բաժաններ 25 և 30 կ., մի աման ջրոցներ 50 կ., պատեւա ծխողների համար 60 կ. Փռնաք, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:
10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.— 1 ռ., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ռ., 1,000 ՄԱՀԱԿԱԼՆԵՐ 5 ռ.—35 ռ., 400 արշին բոնալէյ 1 ռ.—1 ռ. 30 կ., պա-րուսինա 40 կ.—1 ռ., 300 հատ բեղովեր 4 ռ.—35 ռ., 700 ալբոմ ԿԵՍԱՐՆՈՎ, 10,000 Փռնաք թէյ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ռ. 65 կ.: եր-կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-մար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ:
27—100